


ԽԱՐԱԽԱՔԱՆ

ԳԱՒԱՌԱՑԻՆԵՐՈՒ
ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆՐԱՊԵՏ



Ա. ՏԱՐԻ

30 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1941

Թ.Դ.Ի 6

Խմբագրային
Մ. ԻՓԷՔՃԵԱՆ

Արտատպ
Հ. ԹԱՊԻՊԵԱՆ

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Կործանիչ Համակերպութիւնը (Խմբ.)
Պոլիսը եւ Գաւառը
Մանկութեան Համար (բանաս.)
Աղետեղ
Առաքել սին
Համակերպումը
Տաղնայ Տաղնայի Վրայ
Մեզ Համար չե՛սն (բանաս.)
Մուտի իսլամ աղաները

ՄԻՆԱՍ ԻՓԷՔՃԵԱՆ
ՄԱՄԻԿՈՆ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ
ԱՐՄԷՆ ՆՐԿԱԹ
ԱՇՈՏ
ՍԵՐՈՐԷ ՏԷՐ ՅԱԿՈԲԵԱՆ
ՄԻԶՐԱՆ ԲՐՈՒՏԵԱՆ
ԳԱՐԵԳՐԻՆ ԱԹԷՇԵԱՆ
ՅԱՎՀ. ՄԵՂԱՐԻՆԻ
ԺԱՅՈՒ

Տեղական Լուրեր

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ

Քերիս խմբագրական եւ վարչական մարմիններ՝ Նոր տարւոյ առթիւ կուգան ի-
րենց շնորհատուութիւնն ըր յայտնել. բոլոր աշխատակիցներուն, Գործակալներուն, Բաժա-
նուրդներուն ու Բարեկամներուն:

ԱՄԱՍԻԱ

Տպագր. ՅՈՎՆԱՆ ԵԱՆ ԵՒ ԵԱՐՏԵՄԵԱՆ

«ԱՄԱՍԻԱ»-Ի ՀԱՍՑԷՆ

آماسیه ده «آماسیه» غزنه سی مدیریت

Խմբագրության «ԱՄԱՍԻԱ»-ի խառնակաշ կամերեսի-Ամասիա
Rédaction de la Revue «AMASSIA», a Amassia (Turquie d'Asie)

ԱՄԱՍԻԱ

Կը հրատարակուի ամէն ամսու 1ին եւ 15ին, բուրժերէն եւ հայերէն
բաժիններով: Բուրժերէն բաժինը մօտաւորապէս 4 էջ, իսկ հայերէնը 12
էջ. երկու բաժինը միասին մօտ 16 էջ պիտի ըլլայ: Բաժանորդներուն
արեւելան 24 թիւ պիտի տրուի:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոստիստ տարեկան 1 մեկնիս
» վեցամսեայ 0.50 »

Արտատպահան տարեկան 5 ֆր.
» վեցամսեայ 2.50 »

Բաժնեգիրքը քաղաքաւարապէս կանխիկ է: Եւրոպացիներու համար առանձին
նկատարաններ տրուած են կը տրուին:

Տաւր օրինակ «Ամասիա» ժապառակին մէկ օրինակ նուէր:

ԱՄԱՍԻԱՅԻ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Թերթն տպագրուած ըլլալին ու հաւաքին է Պր. Յովսէփ Բալուեան, որուն մեր տղա-
կուն լաժանդները իրենց բաժնեգիրները վճարելով պարտին ստացադիր պահանջել:

ԵՌԱՄՍԵԱՅ ՇՐՋԱՆԸ ԲՈՒՐՈՒՄԸ

«Ամասիա» իր այս թիւով եւամսեայ շրջանը բոլորելով կը մտնէ իր երկրորդ եւ-
ամսեային, հետեւաբար իբր բարոյական պարտաւորութիւն կը հրաւիրենք՝ բոլոր այն
թերթ ստացող մեր մօտաւոր ու հեռաւոր բաժանորդներուն որ իրենց բաժնեգիրները
փութացնեն անմիջապէս որպէս զի ի վիճակի ըլլանք թերթը ալ աւելի փայլուն վիճա-
կի մը բարձրացնելու:

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Երդասէն Հեար Կարապէտ Հիւսիկեան մէկ տարեկան «Ամասիա» կը նուիրէ Զիյե
Նուանդ Վարաճեանի:

ԽԱՅԱԿԱՆ

ԳԱԻԱՌԱՑԻՆԵՐՈՒ
ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍԸ

Ա. ՏԱՐԻ

30 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1911

ԹԻՒ 6

Խմբագրական

ԿՈՐԾԱՆԻՉ ՀԱՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Վսեմ. Մխրեատար Սեմէս Մամիս Պէյի

Տէր,

Քաղաքէս 3 ժամ հեռու Ձանա կոչուած թուրք և յոյն խառն գիւղին մէջ քանի մը տարիներէ ի՛ վեր սխաբեմաթիփ կերպով ոչխարի, կափի և շն.ի գողութիւններ կ'ըլլան եղեր: Գիւղացիներ քանիցս տեղական իշխանութեանց գիմելով խնդրած են վերջ մը տալ այս փճացնող սովորութեան. սորկայն ցաւալի է ըսել թէ իշխանութիւններն որեւէ կերպով միջոց մը չեն ուզած գտնել վերջ մը տալու այս փոքրիկ գողութիւններուն, որոնք տակաւ առ տակաւ համեստ գիւղացիութիւնն իր ապրուստի միջոցներէն զրկելով՝ նիւթապէս փճացումի կ'առաջնորդեն. և արդէն առաջնորդած են ալ:

Քանի մ'օր առաջ այդ գիւղացիներէն մէկ քանիին հետ ծանօթանալու առիթն ունեցանք: Անոնք իրենց կրած զրկանքներն անանկ յուսահատական երևոյթով մը կը պատմէին որ բառերը իրենց սյրած որսերէն ինքնորեքաբար հեկեկանքի ձևով դուրս կուգային: Դեռ քանի մ'օր առաջ, իրենց թուրք գրացիներէն մին օր յերեկով՝ Ասլան օղլու իշխային երկու ոչխարները գողնալով փախչիլ կը փորձէ. ետեւէն հասնելով կը բռնեն. ու

այդ օրը՝ դիւզը գտնուող Թահսիլտարին բերել կ'ուզեն և կը բերեն ա'յ, սակայն ահա Թուրք դիւզացիները կը հաւաքուին և յոյներուն լաւ ծեծ մը քաշելով աւազակը անոնց ձեռքէն կ'առնեն: Թահսիլտարը՝ այս բոլոր կ'առնելուն տկանատես կ'ըլլայ և ձայն իսկ չի հաներ: Խեղճ դիւզացիները իրենց Թուրք գրացիներուն այս վատ ընթացքն ու վերաբերումը տեսնելով բոլորովին յուսահատած, չգիտեն թէ ի՞նչ խօսին և ի՞նչ միջոց գործածեն ազատելու այս տնտանելի կացութենէն. կարծես բոլորովին ստրկացած բողոքելու համար իրենց եղած թելադրանքներն մերժելով, աչքերնին վեր վերցնելով «Աստուած ազատէ մեզի այս վիճակէն» կը բացազանչեն միտքերան:

Այս քանի մը տողերը Ձերին վսեմութեան ուշադրութեան յանձնելով կ'ապաստենք այնպիսի կարգադրութեան մը, որ հիմնովին վերջը դարմանելով բնային ունենայ:

Մենք տեսներ այդ դիւզացիներուն քով յուսահատական համակերպութեան վիճակ մը: Իրենք հիմնովին կորսնցուցած իրենց ինքնութիւնը, տարակտան իրաւունքնին պաշտպանելու քաջութիւնը իսկ չեզոքացած է իրենց քով, տեսնելով իրենց կրկնակի դիմումներուն ապարդիւն մնալը: Եւ զընտրացի ստրկակներն ալ ըմբռնած ըլլալով տանց հոգեբանութիւնը, այսօր չեն քաշուիր օր ցերեկով գողնալու, և գողցուածներն ալ հաւաքաբար պաշտպանելու:

Վսեմ Պէյ, Դուր ծանօթ ըլլալով պատմութեան, ծանօթ ըլլալով նախ բռնակալութեանց ծագման, կրնաք խորհիլ թէ երբ տարր մը այսպէս վախի ու տրհա իւրքի ազդեցութեանց ներքեւ չի պաշտպանուիր արդարութեան պաշտպաններէն, այն ասին երկու որոշ ուղղութեան կը հետեւի. կամ կ'ըմբոստանայ, կամ կը համակերպի և կ'ըլլայ ստրուկ: Մենք այս դիւզացիներուն քով տեսներ ստրկանալու բոլոր նշանները, և իբր նախանձախնդիր հայրենասէրներ համայնքի մը ստրկանալը վնասակար կը նկատենք ընդհ. հայրենիքին. դարձեալ նոյնքան վնասակար կը գտնենք ուրիշ համայնքի մը աւարտաւթութեան, և կողոպուտի վարժուիլը: Ուստի կրտպասենք Ձեր քաղաքակրթեայ և զարգացեալ հանգամանքներէն որ արգարութիւնը ուժգին կերպով զգալի ընէք այդ դիւզին մէջ՝ որպէսզի ստրկութիւնը իրենց վրայէն թօթափեն: Յոյները, և ուրիշի վաստակով ապրիլ վարժուող պարտաբոյժներն ալ սկսին իրենց քրտինքով ու հալալ վաստակովը ապրիլ իբր պատուաւոր օտմ. քաղաքացիներ:

Այսպէս Ձեր իրաւասութեան սահմաններուն տակ գտնուող վայրերու մէջ սահմանադրութեան պահանջներու իսկական գործադրութիւնն սպասելով մընամք յարգանքօք:

Մ. ԻՓԷՔՃԵԱՆ

ՊՕԼԵՍԸ ԵՒ ԳԱՒԱՌԸ

Առնաառաջի քարձք գաղափար մը կազմուած է Պօլիսի վրայ ու ստորին՝ գաւառի. Պօլիսը կը նկատուի իբրեւ արեգակնային դրութեան կեդրոն մը, ուրկէ իրենց լոյսն ու կեանքը պիտի առնեն գաւառ-մտրորակները, որոնք կ'ենթադրուի թէ, յաւառնապէս դատապարտուած են այդ կարծեցեալ լուսագունտին չուրջը թաւալելու, անոր արբանեակը ըլլալու, անոր հետեակն ու ինկարկուն:

Իրականութեան ու տրամաբանութեան բոլորովին հակասող այս կարծիքն ու տեսութիւնը, որքան ալ որ 20-30 տարի առաջուան թափն ու կորովը կորսնցուցած է, որքան ալ որ Պօլիսը իր նախկին հմայքը չունի և գաւառը աչքառու շարժումներով սկսած է իր դիրքն ու արժանիքը չնշտել, սակայն տակաւին վարագոյրը ամբողջութեամբ ինկած չէ Ուփրի այդ կարծեցեալ յաւերժադարձի գէմքէն վար, ու կը գտնուին բազմաթիւ միակիսներ. որոնք դեռ լուսատեւ են Պօլսոյ մասին ու յոռեանո՛ գաւառին. ուստի կ'արժէ որ գաւառի մամուլը մերթ զբազի այս հարցով և հասկցնէ գաւառացիին, որ ալ բաւական նկատէ պատրանքի զո՛ մը մը հանդիսանալէ և ճանչնայ իր բարոյաւեան ու մտաւորական գերազանցութիւնը. միեւնո՛ն ատեն գաւառի մամուլը Պօլսեցիին ալ հասկցնելու է, որ դադրի գաւառացին իր երբեմնի հընկարծ տնտեսելէ, մէկգի ձգէ իր յաւակնոտ մեծամըտութիւնը ու ճանչնայ գաւառին արժանապատուութիւնը:

Գաւառի թէ Պօլիս Թուրքիոյ ամենէն մեծ ու լաղամարդ քաղաքն է. գիտենք թէ մայրաքաղաք տնտեսը կը կրէ ան և հոն է կառավարութեան կեդրոնը. գիտենք թէ մենք Հայերն՝ հոն ունինք Պատրիարքարան և Ազգային երեսփոխանական Ժողով, Կեդրոնական պաշտպանի վարչութիւն և այլն. բայց թէ Պօլիս իբրեւ մայր

քաղաք կը դիտուի ու կը սնուցանէ՝ Գաւառի ողջ քաղաքները, ու մեր պատրիարքարան ըստած խրատելակը կը դարձանէ ու կ'ափսիւնէ՝ գաւառի ծով ցաւերը. ասոնք հարցեր են, որոնց պատասխանները դժբախտաբար հաստատական ըլլալէ աւելի բացատրական եղած են մէշա, ու տակաւին գաւառը իրագել չէ եղած տիտը իրականութեան, ու տակաւին «Կեդրոնի ուշադրութեան» կը յանձնուի պէ՛ն բան և «Կեդրոնէն կրպատուի» աւէն լուծում, ամէն դարման, ամէն յոռի դրութեան բարուքում:

Տարիներ առաջ երբ գաւառացին Պօլիս կ'երթար ու քանի մը տարի պանդխտութեան տաժանքը կրելէ վերջ հայրենիք կը վերադառնար, արտաքինապէս փոխուած կը գտնէր զինքը անպատճառ. երբ թուրքերէն խօսելու ըլլար, պի, խոկ երբ հայերէն՝ կոր մասնիկները անհրաժեշտօրէն իր լեզուն ծայրը կ'ունենար. նըզորըզը կօչիկ մը՝ ստքերը, օտարուած բարձրագիւր օձիք մը վիզը, պարսօն մը ձեռքը և եթէ դպրոցի եղես ալ տեսած էր, ըթին վրայ ալ պօչաւոր ակնոց մը՝ անխուսափելի էր. Պօլսեցիին հով մը կար վրան. Պօլսոյ ջուրը խմել է կ'ըսէին և յարգանքով մը կը վերաբերուէին ատեն մը իրեն հետ. այս ծիծաղելիութիւնները հիմա մեծագոյն մասամբ դադրած են ուշադրութիւն գրաւելէ, որովհետեւ գաւառներու մէջ ալ մայնաւոր կօչիկները, գաւազանները և ակնոցները, քօյալ օձիքներն ու թենցները սովորական գործածութեան մէջ կը գտնուին և Պօլսոյ ծեփքքումսին ու խօսքի, շարժումը ձեւականութիւնները պէտք եղածէն աւելի ընդօրինակուած և իւրացուած են, չնչկով գաւառացիին պարզութիւնն ու անկեղծութիւնը...

Այսպէս ուրեմն, դժբախտաբար թէ բարեբախտաբար, որը կ'ուզես համարէ.

արդուզարդի, ցոյցի, մէկ խօսքով արտաքին որեւէ նորոյթի համար գաւառը այլ ևս չի կարօտիր Պօլսին, փա՛ռք սատանային, անբարոյութեան, անկրօնութեան իմաստակութեան հոսանքներով ալ Պօլիս ողողեց գաւառները. տունմային առաքիւնութիւնները, քրչստոնէական բարեպաշտութիւնները՝ նախապաշարուեմներու հետ չփոթելով հարուածեց կրցածին չափ: Դալով գրականութեան, մտքի զարգացումին, այսուհետեւ Պօլսը չէ ապահովարար, որ զեկավարն ու առաջնորդը պիտի հանդիսանար գաւառին:

Պետական կարգ մը կրթական բարձրագոյն հաստատութիւնները բացառութիւն ունենալով, այսօր գաւառին կրթական վիճակն ու պայմանները աւելի գոհացուցիչ են և նպաստաւոր՝ քան Պօլսոյ ունեցածը. մեր գաւառական ազգային վարժարաններուն մէջ կարող ու ձեռքն հաս ուսուցիչներուն թիւը աւելի շատ է քան Պօլսոյ թաղայն վարժարաններուն մէջ. նկատելի է որ գաւառի մէջ 2-3 տարի ամսականով չազիւ գնահատուող ուսուցիչ մը, երբ Պօլիս կ'երթայ, հոն կրկնապատիկ աւելի ամսականով պաշտօն կը գտնէ, ու այս պարագան ո՛չ այնքան վերագրելի է տնտեսական պայմաններուն՝ որքան ձեռնհասութեան. որովհետեւ գիտենք թէ, Պօլսոյ մէջ ալ 2-3 տարի ամսականով ուսուցիչներ խիստ շատ կան:

Մամուլի ազատութեան շնորհիւ, գաւառներու մէջ ալ տպարաններ հաստատուած են ու թերթեր ու հանդէսներ կը հրատարակուին. այս պարագան Պօլսոյ մէջ հաշտ աչքով չի դիտուիր, որովհետեւ վարժուած են անոնք իրենց մենաշնորհը նկատելու հեղինակութիւնն ու լրագրութիւնը. բայց թէ իրաւունք ունին. առիկայ մի՛ հարցներ. միայն պարզ ակնարկ մը կը բաւէ քեզ համոզում գոյացնելու, որ Պօլսոյ մէջ տպագրուած ու հրատա-

րակուած կարեւոր, աչքառու դասագիրքերուն, և այլևայլ հեղինակութիւններուն հեղինակներն ալ ամենամեծ մասամբ գաւառացիներ են, ինչպէս նաեւ թերթերու և հանդէսներու խմբագիրները:

Դիտելի է սակայն, որ գաւառացին է Պօլսոյ լրագրութիւնը քաջալերողը, մինչդեռ Պօլսեցին գաւառի լրագրութիւնը չի քաջալերեր. Պօլսոյ ո՛ր մէկ թերթն է որ գաւառի մէջ հարիւրաւոր բաժանորդներ չունի, իսկ գաւառի թերթերէն ես կը վախնամ որ Պօլսոյ մէջ ստանաւոր բաժանորդներ ունեցող թերթ մըն ալ չկայ. այս ալ ապացոյց մը չէ՞ գաւառին մտաւորապէս ունեցած գերազանցութեան Պօլիսի վրայ:

Մենք կը փափաքենք որ գաւառի Հայը դարձեալ շարունակէ Պօլսոյ հայ լրագրութիւնը քաջալերել ու գնահատել, անոր մէջ կարկառուն դեր ունեցողները որոշելով. սակայն կը պահանջենք որ Պօլսոյ Հայն ու լրագրութիւնն ալ փոխադարձաբար նոյն վերաբերմունքը ունենայ գաւառին հանդէպ և ո՛չ թէ մնապարծ արհամարհանք մը, զոր նեղելի չենք գտներ:

Կը հաւատանք թէ Օսմ. Խորհրդարանը հեազնեռէ նահանգային վարչութեանց իրաւասութեան չըջանալը պիտի ընդլայնէ և քուէարկէ ա՛յնպիսի օրինակներ, որ գաւառը կեդրոնին կապուած ըլլալով մէկտեղ աւելն քան անկէ չըպատէ, ինչ որ անրնական է ու մեր երկրին կենսալիան պէտքերուն ու շահերուն հակառակ: Կը պահանջենք սակայն, որ Ազգային Սահմանադրութիւնն ալ ենթարկուի այս անհրաժեշտ փոփոխութիւններուն, որոնցմով գաւառական ազգային իշխանութիւններուն իրաւասութիւնն ալ իր բնական ընդլայնումը ունենայ և գաւառի գործերը Պատրիարքարանի անտարբերութեան երեսէն այլևս չառուծեն ու քմահաճոյքներու չենթարկուին: Մարզուանի

Գաւառական ժողովը ա՛նա ամբոսներէ ի վեր օրինաւորութեան ամէն պայմաններու տակ ընտրուած է և սակայն կեդրոնը դեռ չէ վաւերացուցած ու գործերը երես, վրայ կը մնան. ի՞նչ կը նշանակէ այս. Լեւոնտրդի մը ընտրութիւն, ժողովի մը վաւերացում, վկայագրը մը հաստատութիւն, ամբոսներ կը աւեն, կը ձգձգուին, կը քաշքշուին ու գաւառի կենտրոնական շահերը կը վտանգուին:

Ճանչնա՛նք Պօլիսը իր իսկական գոյնով և իրականութեան մէջ. ճանչնա՛նք և գաւառը իր ճշմարիտ արժանիքներով

և իրաւունքին մէջ. քանի այս ճանաչողութիւնը ուշանայ, ա՛յնքան պիտի տուժէ գաւառը, ա՛յնքան պիտի վնասուին գաւառին կրթական ու զարգացական բոլոր գործերը. հրամայական պահանջ մըն է առի, վայրկեան մը իսկ պէտք չէ գեղեւիլ. Պօլիսը իր կենտրոնականութենք սկսած է կորսնցնել, գաւառն է որ վերածնունդի շրջանին մէջ մտած է և ի՛ր ուժերով պէտք հասնել բաղձալուած վիճակին. ուստի գաւառացիին աւելի քան երբեք պէտք է որ իր ուժերը զօրացունէ:

Մ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ՄԱՆԿՈՒԹԵԱՆՍ ՆՍՄԱՐ

Մաղիկներ՝ կ'ուզեմ, ես գարուն կ'ուզեմ,
Ուովհետեւ իմ երազքս զրեւայ՝
Այս հիմ օրերու աստղերը ու՛ր են,
Մաղիկներ՝ կ'ուզեմ, ես գարուն կ'ուզեմ...

Այս հիմ օրերու յոյսերը ու՛ր են՝
Ռոնք ա՛յնքան վառ եւ պաճառ էին,
Այս նոր յոյսերը շողալ չը գիտեմ,
Այն հիմ օրերու յոյսերը ու՛ր են...

Ո՛չ մեկը արդեօք ինձի չի ճանչնար
Անցած զրեւացած մպնուկ կեանքիս մեջ,
Երբ դեմքիս վրայ անկերջ ժրպիտ կա՛ր,
Ո՛չ մեկը արդեօք ինձի չի ճանչնար...

Ինձի չի տեսա՛ք երբ ես կ'երգեի՛,
Երբ մտնուկ էի, կ'երգեի՛ երբ,
Երբ կը սիրուէի ու կը պաշտուէի,
Ինձի չի տեսա՛ք երբ ես կ'երգեի...

Բայց բողե՛ք, բողե՛ք, ես ալ չեմ ուզեր,
Թողե՛ք որ յիշեմ, յիշե՛մ, երազեմ,
Այն անցած կեանքս՝ որ վառ գարուն էր,
Բայց, բողե՛ք բողե՛ք, ես լալ չեմ ուզեր...

Գահիրէ

ԱՐՄԷՆ ԵՐԱՍԹ

ԱՂԵՐՍԵՐԳ

Յուրս է գիշերն խաւարամած .
...Տե՛ս որքե՛ր կան հե՛հ, անօրի
Ձիւնին, բուհին մեջ մարմնաբաց
Ձգացումին սակ ամօրի :

Տե՛ս որքե՛ր կան փողոցին մեջ
Վիրաւորում, արիւնլուայ .
Ահ, կ'աղերսեն անոնք, անվերջ
Քեզի դառցած մա՛յր, ձիւնին վրայ :

«Սօցիալիզմին»

Փետր մը հաց, ափ մը կրակ
Տուր որ ապրին անարգելով
Անգութները հուրի ճարակ :

Կապէ անոնց վերներն բոլոր,
Ձի չի մեռնին այնտեղ անհեր,
Գրութեան մա՛յր, մա՛յր երկնաւոր :

Վ. Ֆեօփիս

ԱՇՈՏ

ԱՐՇԱԼՈՅՍԻՆ

Եկո՛ւր, արշա՛լոյս, եկո՛ւր, քու լու-
սացնցուղ չիթերովդ օրհնէ՛ աշխարհը :
Քու կենսածիր վրձններովդ մութը լոյսի
և մեծ դադարը կեանքի փոխակերպէ,
ոգևորելով տառապանքիւ մարդկութեան
ստուար բանակը, որ ակնդէտ չէնչօղ
լոյսիդ կրտսրոն նոր խանդ մը առնելու
անկէ :

Նս՛ւն, զրկէ՛ շողիդ եւ ցօղիդ հետ
հովարար դեփուռը կենդանութեան, որ
իր փափուկ հպումներով սրբէ ու մաքրէ
ան ու անդժը ցաւաւանջ հոգիներուն :

Անոնք քեզի կրտսրան, քեզի : որ
պիտի ամաքեն թափանծելով քու էութեանդ՝
անոնց լնդարմայած, յագնաբեկ
չրկերուն մէջ, այս՝ քու ներկայութեանդ
սփոփանք մըն է, քու գոյութեանդ չգո-
յութիւնն է բոլոր ցաւերու և ամէն տա-
ռապանքներու :

Անոնք քեզմով պիտի ապրեն կարճ,
բայց երջանիկ վայրկեան մը, քեզմով
պիտի անցնեն ժամանց մը անմոռաց ու
բարի :

Որովհետեւ դուն ոյժ ես, կեանք մը
աւիւնով լի, որուն մէջ կը հալի, կ'անէ-
անայ ամէն անձկութիւն :

Դուն, խթանը պիտի բլլաս խեղճ բան-
ուորին, իր կիսաքաղց կեանքը պատ-
ուաւոր կերպով կանգուն պահել սուղ
ուստը հասիք անոր : Ծագէ՛, սակիթեւ՝
արշալոյս . քանի դեռ թշուառութեան
աճիւններ չէ՛ դանդաղ ան սեւ՝ հոգին մէջ,
ափ մը սեւ հող ալ ինքը, բոլոր հոգեզէն
արարածներուն մէջ . . . :

Թող ինձան, վարդապիւճ արշալոյս,
թող ինձան, քու հրաշէկ ու սակեցոյն
ցոլքերդ, քու շառագոյն բացերդ նուա-
ղուն՝ բանուորին այրած դէմքն ի վար
ու թող ներագդէն անոր հագւոյն մէջ գի-
տակցութիւնը իր վիճակակից եղբայրնե-
րու անբաւարար իրաւունքներուն և ուժ
ու կորով ներարկեն անոր բազուկներուն
մէջ՝ վազուան պայքարին համար՝ նուիր-
ական ու Սրբազան :

Ծագէ՛, արիւնանե՛րկ արշալոյս, ծա-
գէ՛ լուսաւորելու համար պայքարը բան-
ուորին, հոստալիւճ համար անոր կարմիր
արիւնը, կարմիր կռիւի՛ն մէջ ահաւոր :

Ծագէ՛, արիւնանե՛րկ արշալոյս, ծագէ՛
վազուան յաղթութեան ոսկի առաւօտը
բաղձալի, ծագէ՛, էլ մի յամենար . . . :

Ամասիա

ՍԵՐՈՒՆԷ ՏԵՐ - ՅԱԿՈԲԱՆ

ՀԱՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Եթէ լրջութեամբ գաւառներու տնտեսական պայմանները ուսումնասիրենք, պիտի տեսնենք որ, գաւառացի տնտեսական յաջորդական անձկութիւններու և նեղ դրութիւններու մատնուած, իր կրկորդի կուրը կը մղէ աւելի անհաւասար և աւելի անողորմ:

Ու այդ անիծեալ կրկորդին համար, զանազան եղանակներով կը մղէ պայքարն՝ առանց նկատի առնելով անոր ունենալիք ազդեցութիւնը հասարակական կեանքի և ընկերային խաւերու մէջ:

Այլեւելու պայմանները կը դժուարանան բարդ հանգամանք մը կըստանան: Եւ գաւառացին ալ տեսնելով թէ՛ պայմանները անմատչելի դարձած են՝ կրտսի աւելի յեղձիգակ միջոցներ ի գործ դնել՝ հասնելու համար իր սրտադրական նպատակին:

Այս իրականութեան յաջորդութեան, գաւառացին կը շնորհի իր սկզբունքէն ու լոկ համակերպողը կը դառնայ տիրող դատակարգին:

Եւ այսօր կարգ մը գաւառներու մէջ ընչազուրկ դատակարգը բոլորովին համակերպած է՝ ստրուկ կամակատարը դառնալ աղային և կամ հարուստին:

Որքան ատեն որ գաւառը ունեցած է իր աւանդութիւններուն հետ իր զուլալ սրբութիւնը՝ սակայն և այնպէս, ունեցած է դիտողութեան աչքառու պարագաներ և քննադատելի կէտեր, որոնք երբ այս ընթացքով շարունակուին կրկնուիլ՝ գաւառին արժէքը պիտի նուաւ տալնեն:

Գաւառներու մէջ դատակարգացին կը ուրիշ կը մղուի և աւելի կը զօրանայ հարուստի և ազգատի, կեղեքողի և կեղեքուողի, հարստահարողի և հարստահարուողի խտրական ոգին:

Կարգ մը հարուստներ, որոնք գաւա-

ռին տիրողը հանդիսացած էին անցեալ շրջանին, նմանապէս բարլամենդական այս դրութեան մէջ ալ իրենց հերթին գլուխն են՝ թէ պետական և թէ կրթական, թէ հասարակական և թէ ընկերային գործերու մէջ:

Պետական պաշտօնեաներ ատենց կամ մակատարը կը դառնան ու կ'ընթանեն իրենց աշխարհայեացքը՝ մոռցած բոլորովին սկզբունքի հարցը: Միշտ կրաւորական դիրք մը ունին կարգ մը պաշտօնեաներ, որովհետեւ այդ հարուստ դատակարգին ազդեցութիւնն այնքան զօրաւոր է որ, նոյնիսկ կրնայ պետական պաշտօնեայ մը պաշտօնանկ ընել՝ երբ կը տեսնէ թէ իր շահերը չեն պաշտպանուիր: Եւ պետական պաշտօնեան թեւ լաղբուած հագի խնդիրէն կը համակերպի անոնց՝ անդիտակ բոլորովին իր արգաւորաւորական սկզբունքներուն:

Այս տիպեր իրականութիւնը միշտ և յաճախակի կը կրկնուի պետական շրջանակներու մէջ և կարօտ դատակարգն այս և ախեր կը քաջէ տեսնելու համար պետական բարեկարգութիւնը: Կեդրոնէն կը բողբեն՝ սակայն բողբին ազդեցութիւնը չի լսուիր և կը մնայ անապատին մէջ արտասանուած արձագանգ ձայնին:

Մտաւորական ճանչցուած այդ պաշտօնեաները չեն ուղեր բը ճշմարտութեամբ գործէն, որովհետեւ գիտեն թէ ապագայ ընտրութեան ատեն, հարուստը իր հարստութեան համարուն շնորհի պատի կրնայ հաւաքել իր արքանեակները և չեղծագինել զայն՝ եթէ պէջեցիկ ճախրէի մէջ նախագահ է և կամ որեւէ պետական պաշտօնին գլուխն է:

Գիտէ թէ՛ իրեն տեղ ուրիշ մը պիտի նստեցնեն և ստիպուած պիտի համակերպի անոնց՝ զոհելով մեծամասնութեան

չահը՝ փոքրամասնութեան չահին։ Եւ ինք վստահ է թէ իր չահին աղբիւրը պիտի կտրի և որ և է գործ մը չպիտի կրնայ ընել, քանի որ արդէն իսկ որ և է կարողութիւն մը ցոյց չի տար։

Ստիպուած կամայ ակամայ պիտի հետեւի անոնց։ Ու հարուստը ա՛հէն պարագայի տակ պիտի տանի յայթանայի, պիտի պաշտպանէ իր չահերը և օրըստօրէ պիտի ուռճանայ։

Ինչպէս որ պետական կեանքը հարուստներու ազդեցութեան տակն է՝ նրմանապէս կը կրկնուի միեւնոյն իրողութիւնը, միեւնոյն առեղծուածը կրթական կեանքին մէջ։

Հարուստն է որ թաղականութեան քուէն կը չահի և հարուստն է որ հոգաբարձու կ'ընտրուի, որովհետեւ ինք ճանչցուած է գաւառի խօսերուն մէջ՝ անհանկուստ, բոլորովին տարբեր հասարակ մանկանացուներէն։

Կրթական խնդիրներու մէջ հող չէ թէ այդ հարուստ պաշտօնականներուն մշտքը, մանկավարժական ու կրթական խնդիրներու հետ խոտոր կ'ընթանայ և սակայն ան կ'ընտրուի, որովհետեւ ան տարբեր դասակարգ մըն է՝ բոլորովին վեհ՝ արդիւնաբերող ու բազմաշխատ տարրէն։

Եւ հոգ բոլորովին կը կորսուի աղքատ դասակարգին ունեցած բնորական իրաւունքը, որովհետեւ աղան գիտե...։

Հարուստներ, անձամբ և միջնորդներու շնորհիւ կ'աշխատին որ իրենք ընտրուին, օրպէսզը ազգին ճակատագիրն իրենց ուղածին համաձայն չահագործեն։ Եւ նոյն իսկ խորհուրդներ կան թէ՛ թաղականութեան անդամ ըլլալը վարկը բարձրացում մըն է և պարծանք մըն է իրենց կիներուն։

Եթէ աղքատը, այդ հարուստը կրթական պաշտօնեայ կ'ընտրէ՝ իբր թէ անօթի պիտի մնայ։ Ու անա, այս նուիրագոր-

ծուած համագումով իր քուէն կուտայ հարուստին, որ կրթական հասկացողութենէ բոլորովին հեռու է։

Աղքատ տարբեր բոլորովին կը համակերպի, խորհելով թէ աղան կը վերաւորուի և ինք չի կրնար տալ որ ան գործառնութիւն ընել։

Իսկ այդ աղաներ, այլևս իրենց ուղածին համաձայն նաւը կը մարեն, որովհետեւ զեկր իրենց ձեռքն է։ Երբ կը տեսնեն թէ՛ կրթական յարկին մէջ բազմազան ու ճշմարտութիւնը պահանջող ուսուցիչ մը կա՝ անմիջապէս ատար առնէ խոչնդոտներ կը հանեն ու զայն օր առաջ տապալելու կ'աշխատին, որովհետեւ այդ անկեղծ պաշտօնեան ատենց ամբողջ մաղձը իրենց առջև կը թափէ և կը քննադատէ անոնց ազդեցութեան ընթացքը։

Անոնք կ'աշխատին որ ժողովուրդին կոյր համակերպումըն նման՝ ուսուցիչներ ալ համակերպին։ Իսկ թէ՛ չեն համակերպիր և ճշմարտութիւնը կը պաշտպանեն՝ Կալէոսի փորձանքին կը հանդիպին և անոնք ալ համակերպող ուսուցիչներու շարք մը կըստեղծեն իրենց հովանաւորութեան տակ և արդիւնքը կ'ըլլայ՝ Կրթական մեծ անկում...։

*

Ահա ներկայ Պետական ու կրթական կեանքը գաւառներու մէջ։

Թո՛ղ ժողովուրդը գիտակցի։ Թո՛ղ հասկնայ իր պարտքերն ու իրաւունքները։ Այլևս հերի՛ք է այսքան համակեցում։ Թո՛ղ թօթափին պետական ու կրթական յարկէն ներս, ազգական ազդեցութիւններ։ Հերի՛ք է ժողովուրդին չահագործումը։ Թո՛ղ վերնաւոր համակերպումներ, քանի որ քաղաքակրթութիւնը պիտի ստեղծեն պետական ու կրթական յարկերու դարգացումը։

Ահա՛ ներկայ իրականութեան արդար պահանջը։

ՄԻՀՐԱՆ ԲՐՈՒՏԵԱՆ

ՏԱԳՆԱՊ ՏԱԳՆԱՊԻ ՎՐԱՅ

Յուզումը ընդհանուր է: Դպրոցական սեմերուն տակ, ընտանեկան ոճախներու քովիկ, առևտրական: իրապարակին վրայ, լսարաններու մէջ, իգական հաւաքոյթներու ժամանակ, խեղճուկ կրպակներու խարխուլ առաստաղին տակ, սրճարաններու տակ և վերջապէս ամէն տեղ յուզումը ընդհանուր կերպով կը տիրէ:

Դպրոցական սեղաններու վրայ հակող պատանեկութեան, մինչև զառամեալ ծերութիւնը, դալուկը զէմքերնուն վրայ յուսահատական նուայէ տառապածի նրման մէկ նիւթը, մէկ խնդիրի շուրջ կը խօսին, կը վրձին և վերջապէս որոշ եզրակացութեան չեն յանգիր, առարկելով թէ դեռ ո՛չ որոշ օրէնք կայ և ո՛չ ալ օրէնքին տեղեակ անձնաւորութիւն մը: Եւ խկապէս ալ թէ օրէնքը մարդը, և թէ ժողովուրդը. — իրամաններու կամ մակատարը, — կ'ընեն, կ'արձանագրեն, կ'որոշեն, կը հաւաքեն, կը զրկեն, բայց առանց օրինական արամագրութեանները ստուգապէս գիտնալով, այլ լսի վերին իրամանին անսալով: Այս է արդէն մեր ամբողջ իգեբանութիւնը:

Անշուշտ ամէն բնութեցող կռահեց թէ՛ դա՛, հայերուս մինչև 43 տարեկանը զինուոր ըլլալու համար տրուած որու շումն է, որ այս յուզումներուն, այս տագնապներուն ու մտահոգութիւններուն պատճառ դարձած է, ամէն անհատ, ու տան վրայ ազդելով:

Հայութիւնը որ, զինուորական նուիրական ծառայութեան մասին այսպէս մտահոգութեան մասնուելով երբ կը դրժկամակի տրուած որոշման հանդէպ, արդեօք նուազ հայրենասէր, նուազ սահմանադրասէր ու նուազ անձնուէր է: Թերևս մեր շօլիկ հայրենակիցներէն ոմանք այսպէս մտածեն և կամ այնպէս մտածելն ալ իրենց համար հեշտ գայ ու

նպատաւոր լլլայ, իրենց մութ ու թուզուն խոհայներուն իրախնայութիւն տեսնելու տեսլիւտէն: Բայց եւ թուրքից հին ու նոր պատմութիւնը ձեռքս բնուած, մեր շօլիկ հայրենակիցներու յայց կուտամ թէ, հար մամէն ատեն և միշտ թուրքից հանդէպ անկեղծ, հայրենաբեր ու անձնուէր եղած է: Իսկ ներկայ մրտահոգութեանց ստեղծուելը իր լուրջ, գիտական ու որոշ պատճառներն ունի: Եւ արդէն, եթէ մեր ներկայացուցիչները փոխանակ ազգայնամոլական և յետադիմական հոսանքներէ տարուելու, մը քիչ անկեղծութիւն և բնկերային հարգելու մասին հասկացողութիւն ունենային, այց որոշուեր զուրս չեր գար:

Արեւոր ծանօթ ճշմարտութիւն մըն է որ Ազգ մը, Ժողովուրդ մը, Պետութիւն մը և վերջապէս երկիր մը, տնտեսական բարւոք վիճակի պէտք ունի կարգ մը կառարկութիւններ ու առաւելութիւններ յայց տալու համար, բաւական է որ հայ տարրը այս ընդհանուր օրէնքին առջև բացառութիւն չպիտի կազմեր: Բայց հայութիւնը ունի այդ բարւոք վիճակը, և կամ կառավարութիւնը իր բռնապետական շրջանին սոււած է միջոցներ տնտեսական բարւոքումներու համար և նոյնիսկ ներկայ սահմանադրական վիճակին մէջ կուտայ, կառավարութեան մը պահանջուած պայմանները: Ահա վերջին բուն կեդրոնը, ուրկէ սկսած է փտտիւտը: Բռնապետական շրջանին, ծանօթ գաղանային խեղճութիւններու դարձած մանալու ազդեցութեան չնորիւ, հայկական գաւառներ սկսան թայտուել, կողոպտուել, սպաննուիլ և յետոյ դաւտարկուիլ գաղթականութեան միջոցաւ, այնպէս որ շատ մ'ընտանիքներ զիրենք ապրեցնող բազուկներէն ու գիրենք խնամող սիրելիներէն զրկուելով անտէր ու

անպաշտպան մնացին խեղճ ու կրակ վիճակի մը մասնուկով: Հայութիւնը արնատեսապէս աննախանձիկ ու քայքայուած վիճակի մը մասնուկով: Մահմանադէրութենէ վերջ, երբ կը խորհէինք թէ հայ տարրը պահիկ մ'ազատ չունչ տանելով՝ գաղթաւայրերէն գէպի իրենց օճախները վերադարձողներ պիտի ինքնամիտութիւն իրենց երկրին մէջ, և խաղաղ, ապահով ու վտանգ գործունէութեամբ մը ձեռք պիտի բերէին անտեսական վիճակ մը, որ իրենց համար նպատաւոր և ընդհանուր երկրին համար պատուարներ ու միանգամայն օգտակար բլար: Սակայն ընդհանուր յուսախաբութիւն մը մէջանել եկաւ, կրկին սխաբեանքի ջարդեր, թալաններ, վախեր, երկիւղներ ու անապահովութիւններ ծագում տուին: Յետոյ պատերազմը ծագում տանելով թուրքիոյ ժողովրդեան ընդհանուր տնտեսական գործունէութեան սպառնալու: Առեւտրական ամէն գործունէութիւններ ու ձեռնարկներ զաղբեղան գործելէ: Ամէն անհատ սպառողական գրութեան մը

մասնուեցաւ: Երբ այսպէս տաղնապատգնապի կը յաջորդէ, և ազգի մը միջոյններ չի արուիր խաղաղ զարգացման մը որ իր քայքայուն մարմինը կազդուրէ, և երբ կը տեսնէ թէ իր հայրենակիցներէն մէկ մասը զինքը հայրենիքի խոբթ գաւաիր նկատելով դեռ կ'ուզէ սպասնայ իր գոյութեան ու իրաւունքին, չորնական է այդ տարրը իրաւունք կ'ունենայ մասնագուհու և զժկամակելու իրեն ի վնաս տրուած այդ միջոց 45 ասրեկանը զինուոր ըլլալու որոշման գէտ, որ ինքնին անժամանակ էր ու անպէտ: Մենք անյարմար կը նկատենք այդ որոշումը այս տեսակետով, առանց իրաւունքի սահմանին մէջ մտնելով՝ այսքան տարրեր պէտքի աւսերիկի արուած զբաւմտելու խնդիրը յուզելու:

Ա'չ պարտնենք, ո'չ, տնտեսապէս քայքայուած ու ամէն կերպ զրկանքներու ենթարկուած ժողովուրդի մը գլխուն տաղնապ տաղնապի վրայ մը տեղդէք, գէթ հայրենիքին շահուն ու սիրուն:

ԳԱՐԵԳԻՆ ԱԹԷՆԵԱՆ

ՄԵՉ ՀԱՄՍՐ ՉԻ ԱՆ

Խաւարն է պոստը երկիրն ու երկին,
Բայց հեռո՛ւն, այնեղ, գոգը խաւարին՝
Հորիզոնին վրայ բոց կայ ու կրակ:

Ա՛ն արեալոյսն է, կը ծագի, հո՛գեակ:

Բընութիւնն արդէն կըսպասէ անոր
Ջարթոնի ուժեղ բախով նորանոր.
Մե՛նք ալ. ո՛հ, քե՛տ կարօտ եմք այնքան,
Բայց աւա՛ղ, ընկեր, մեզ համար չէ ան...:

Մըսկին ցանաճ գարին ու ցարեն
Շատ տուտ բուսան սարէն ու ձորէն.
— Գրա՛ւ, հայ բանուոր, հե՛ծ գուն գանոնք,
Տանգուեցաւ յանախ, մնացիր անո՛ք:

Մեր մըսկն անխոնջ, անկուն, անահ,
Ուսին վրայ առած իր մանգաղն ու բռն,

Գրեաց հե՛ծելու բերքն առատ այնքան,
Բայց եղու՛կ, ը՛նկեր, մեզ համար չէ ան...:

Ա՛րդ, կ'երթայ հեռո՛ւն արին ալեւոր
Ժպտովն, արցունով, յուռովն իր բոլոր.
Բռնած նա համբան կ'ըլլայ շուտ անհե՛տ,
Ի՛նք սիրեն ու հոգին առնելով իր հետ:

Տարիներն արդէն նոյնն են մեզ համար,
Ինչ փոյթ նոր արին գեղովն անհամար
Կուգայ մեզ ձօնել մե՛կ վիճ կտրով.

Նոր ջանք ու նոր կեանք եւ արժի գործով:

Մեր վիճքը քաւմ է, մեր արտօսքը բայ,
Ջրկուտման եմք, բախսն է մեզ մոռցած.
Եկաւ նոր արին կը գուրգուրան վրան,
Բայց եղու՛կ, ը՛նկեր, մեզ համար չէ ան...:

Մարգուսն

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԵՂԱՍՏՐԻՆ

ՄՇՈՅ ԻՍԼԱՄ ՄՂԱՆԵՐԸ

Քիչ կամ չատ Մշոյ կեանքով հետաքրքրուողներ, Մուսա և Գասըմ պէյերու, հայալինջ, թալանիչ ու յետադիմական յատկութիւններուն շատ լաւ ծանօթ են:

Քանի մ'օր առաջ կառավարութիւնը Պոլսէն եկած հրամանի մը համաձայն այս երկու գազանները ձերբակալելու և կամ սպաննելու համար, պաշտօնապէս զօրք ուղարկեց, որուն վրայ տեղւոյս հարստ աղաները սրտատրոփ, գործին վախճանը գուշակելով, նախ Մուսա պէյի լնտանիքը կը փոխադրեն քաղաք, յետոյ պառագամաւորութեամբը տեղւոյս մըթէ-սարքին բողբոջելով կուզեն որ հետապնդումները դադարին, որովհետեւ քանի մը հայերու սպաննումն ու թալանումն համար չ'արժեք որ այդ իրենց երկու Պուտուկան (?) եղբայրներն սպաննուին, որոնք ի տարկէն հայրենիքին պաշտպանութեան օգտակար ծառայութիւններ

կրնան մատուցանել:

Սակայն դժբախտաբար թէ բարեբախտաբար հետապնդումը բոլորովին անակնկալ պարագայ մը երևան բերաւ: Մեր աղաներու այդ հայրենիքի պաշտպան պէյերն, ո՛չ թէ քանի մը հայ թալանեղծուն համար բնալինջ լլլալ կ'ուզուի եղեր, այլ բաղէշի Ռուս զեապանատան մէջ իրենց նման քանի մը աւազակներու հետ թուրքիոյ հանդէպ դաւադրութիւններ ծրագրեր են այդ հրէշները:

Զօրքերը 6-7 օրերէ ի վեր կը հետապնդեն աւազակները, բայց ուէ արդիւնք դուրս չի գար: Կ'ըսուի թէ այդ երկու հրէշները քաղաքին մէջ թուրք էշրաֆներու քով ապաստանած են որոնք չեն ուզեր յանձնել, լո՛ւ իրենց հայտանք իդ-ձերը իրագործողներ ըլլալուն համար: Կեցցէ հայրենասիրութիւն...:

Մուս

ԺԱՅՈՒ

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԺԱՄԱՆՈՒՄՆԵՐ

Վիճակիս Ս. Առաքնորդ Գեր. Գէորգ Ծ. Վրդ. Իրանասեան որ վիճակին կողմէ Կաթողիկոսական ընտրութեան համար պատգամաւոր գացած էր, Դեկտ. 29ին քաղաքս ժամանեց: Բարի գալուստ կը մաղթենք:

Մարգուստին Անաթոլիա Գոլէճի բազմամուտ, կարող ու փորձառու անօրէն Տօք. Թրէյսի, տեղւոյս Հայ Աւետարանական եկեղեցւոյ հրաւերին վրայ քաղաքս այցիլելով քանի մը օրուան համար հոգևոր հովիւի մը պակասը լրացուց և մեկնեցու անցեալ Գշ. օր: Իր այս այցելութեան միջոցին թերթիս ուղղութեան մասին օգտակար թելադրանքներ

ըրաւ, որուն համար հրապարակաւ մեր շնորհակալութիւնները կը յայտնենք:

Ս. Գ. Հնչակեան կուսակցութեան անձնուէր գործիչներէն և Կեդր. վարիչ մարմնոյ անդամներէն Տեառ Ս. Մուրաս անցեալ չաբթու Սեբաստիայէն Պօլիս մեկնելու պարագային գիշեր մ'անցուց քաղաքիս մէջ և ընկերական շրջանակներուն օգտակար թելադրանքներ ըրաւ:

ՄԻՈՒԹԻՒՆ

Սեբաստիոյ և Տրապիզոնի կուսակալութիւններու մէջ դանտած բոլոր վրկայեալ դեղագործները համերաշխելով կառավարութեան պիսկինաւե մը տուած են, որով կը պահանջեն որ մինչև առաջիկայ մարտ 1 խանութպաններու և ոչ

վկայեալ դեղագործներու դեղ ծախելը արգելուի, նախառակ պարագային, այդ պայմանաժամը: լրանալուն, բոլոր պատասխանատուութիւնը կառավարութեան վրայ թողելով, դեղարանները անմիջապէս պիտի գոյնն և 10 փարայի դեղ չի պիտի ծախեն, մինչև որ իրենց օրինական պահանջին դո՛ւրստէն չի տրուի: Ո՛ր են մեր փոքր-չափի ուսուցիչները որոնք իրենց և նոյնիսկ կրթական հարցին չա՛նաւն չեն չարժիք միանալու և կողմակերպուելու համար: Մ'ն, գործի: ԿՐԹԱԿԱՆ:

Այժմէութիւն ստացող կարեւոր խնդիրներէն մին ալ Ազգ. վարժարաններու աշակերտութեան տարեթոշակներու գանձման պարագան է: Ինչպէս ամէն տեղ Ազգային կրթական և այլ հաստատութիւններ իրենց բաւարար պիւտճէն չունենալուն համար ժողովրդեան օժանդակութեամբ կր կառավարուին, բնական էր որ այստեղը բացառութիւն չի պիտի կազմեր, և հետևաբար տեղւոյս Ազգ. երկսեռ վարժարաններուն պատասխանատու մարմիններ ալ անոնց պիւտճէն հաւասարակշռելու համար ծընողներու կատարեալ հաւանութեամբ ու ոտորագրութեամբ, իւրաքանչիւր աշակերտի տարեթոշակ մը նշանակած են, և որքան որ տեղեկացած ենք, այդ գրամներու վճարման համար ծնողներու աւելի ղիւրութիւն մ'ընծայելու նպատակով, ամսավճարներու վերածած:

Ահա՛ երբ կր խորէինք թէ ամէն ծընողք իբր իր աւագ պարտականութիւնը, ուսման ու կրթութեան կենսունակութիւնն ու անդադիւրեղութիւնը նկատի առնելով, ճիշտ սրճեալ օրերուն պիտի փութայնէր այդ գրամները, ընդհակառակը քանի մ'օրէ ի՛ վեր նրապարակին վրայ կր տեսնենք մարդեր, որոնք կրթական հաստատութիւններու ու անոնց մշակներու հանդէպ աննպաստ ու նոյնիսկ

հայնոյայից լեզու մը կը գործածեն, իրենց զաւակներուն տարեթոշակը պահանջուելուն համար: Այս պարտականութեան ու պատասխանատուութեան զգացմանց նուազութեան արդիւնք է: Իւրաքանչիւր ծնողքի գլխաւոր պարտականութիւնն, իր օրուան հաղէն զրկուելով, ճիշտ օրին իր զաւակն թշուիր զրկելը, որ թէ ուսուցիչները և թէ աշակերտները օրերով դրամական խնդիրով չի զաւելիւլ աւելի իրենց մտաւորական գործեր վր պարտաւ ն, Պէ՛տք է գիտնայինք այլևս թէ ուսումը հաղէն աւելի կարեւորութիւն ունի: Նաև պէտք է գիտնանք թէ կրթական հաստատութիւնները անհատական քմահաճոյքներու զո՛ր դարձնելու ժամանակը շատոնց անյոյժ է:

Ծնողներ իրենց բռնած այս ընթացքով ուղղակի իրենց զաւակներու դաւաճանք կը դառնան, անոնց ն արագ իրենք խաթարելով ու չփայլած աշակերտ մը դարձրնելով:

Այս կռթիւ տխուր ու քննադատելի պարագայ մըն ալ, նորիստի թաղ, Խորհրդոյ մէկ քանի անդամներուն, մասնաւորաբար մէկին բռնած ընթացքն էր որ որ մեր ուշադրութեան զարկաւ: Ինք իբր պաշտօնական մէկ մարդ զպրոցներու և իր նախորդներու դրած օրէնքները յոռի խժըժանքներէ ու հայնոյայի քննադատութիւններէ պաշտպանելու տեղ «Իբր թաղ. Խորհրդոյ մէ անդամը իրեն պատիւ չ'ըլլուելով իր զաւակներէն դրամ պահանջուելուն», ինք սկսած է անձամբ այդ հայնոյայից լեզուն գործածել ու ժողովրդային գրգռումներ յառաջ բերել:

Գիտակցինք այլևս, ճանչնանք ուսման յարգը և մեր պարտականութիւնները:

Արտօնատէր՝ ՀԱՅԿԱԶՈՒՆ ԹԱԿԵԱՆ,

Խոնաքրապէս՝ ՄԻՆԱՍ ԻՓԷՔՃԵԱՆ,

Տպ. ՅՈՎՆԱՆԵԱՆ ԵՒ ԵԱՐՏԵՄԵԱՆ,

طرابلس غرب و بنغازی به هجوم ایدن دشمنه قهرمانانه مدافعهده بولنان مجاهدین اسلامیة و عثمانیه به ازراق و مهمات و ساثره تدارك و ارسالی ضمنتده (استانبولده وزنه- جیلرده طرابلس غرب و بنغازی مجاهدینه معاونت هیئت) نامیه تشککل ایدن جمعیتک طشرهدن کوندربله جک اغاناتیده قبول ایده- چکندن بحث ایله تشویقات و ترخیات مناه سبهده بولنامسی ایچون تبلیغات اجرایی جمعیت مزکوره ریاستندن التماس قلنمش و بو خصوص- صده صورت خصوصیه و مناسبهده ترغیبات اجرا بیورلمسی مناسب کورلمش اولغله تعمیماً تبلیغ اولنور

اماسیه غزته سی مدیریتنه

۵۱۴۱

۱۱۵۹

الحاق نماینده علیهداردور عثمانی دیگر

۲۸ کانون اول سنه ۳۲۷

داخلیه نظارت جلیله سنک ولایتدن مبلغ ۱۲ تشرین ثانی سنه ۳۲۷ تاریخ و درتیوز التمش طقوز نومرولی تحریرات علییه سی صور- تی بالایه نقلاً اعلان اولنور ۱۴۱۰ کانون اول سنه ۳۲۷

آماسیه متصرفی

احمد ماجد

اژانس تلغرافی

حسین حلمی پاشانک تطبیق ائتلاف فرقه- سنجه قبول ایدلامشدر سیاسی عسکری اداری ایمیق اولان عمر- بانی ضبط ایچون ایتالیانلر جسیم تدارکاتده بولیورلر محمود شوکت پاشا ارمنی بطریق

عثمانی

* *

و وظیفه دار مأمورین حکومتك در . اصلاً بو افكار باطل در بو حکم حقیقتك تمامی شامل دكلدر . ایضاً ایدلم

مملكت تعیر اولئان جسم جسم بر وجود بر بدن فرض اولنورسه حكومت اول وجودك با- شی و مملكتی تشکیل ایدن اقسام اهالی ایسه اهلیت و قابلیت نسبتده بدنك دیگر اعضا لری اولورلر ازاده تعریف اولدی کی ال و ایاق و سائر اعضا لری کندی خصوصی وظیفه لرك اجرا سنده نكاسل ایلدکجه باش دخی در عهده ایلدیکی وظا- ثك تمامی اجرا سنده بولنه ماز پادشاهدن بدأ ایله اك فقیر بر کویلی رنجبره وارنجیه قدر همیزك برر وظیفه سی واردر قانون اساسیك اجرا سنده وطنك خدمتده جمله مزك برر حصه سی واردر و وطنك ترقی و تعالی سی وطنده مسكون هر بر فردك مادی و معنوی مكلف بولندی وظیفه- لرینك حقیقه سیلمسی و اجرا ایلدی ساینده انحق حصول بزیر اوله بیلیر .

مسئله بو حال و حقیقتده بولندی حالده «اسلام و خریستان فصل مساوی اوله بیلیرلر» تفکرنده بولئان مسلم و «بر یول ایله سلك عسکریدن قورتیلیم» تشبیه بولئان اومنی قطعاً معنای مشروطیتی اکلامش عنانلیر عد اوله یازلر ؟ قد- نون اساسینك هر بریمزه تخصیص ایلدیکی وظیفه- لری لایقله اجرادن امتناع ایتیم و با خصوص هر حال و کارده عملی اوله م والسلام .

ما بکوره و ارژا برباره

لفظاً نجات خیال و نتیجه سی دخی وخیم در آدانیملم

و قومك بر ملتك بر مملكتك اساسیش مسعودتی هر حالده بو كلمه لرك فعلاً و عملاً انحق اجرا سنده متوقف بولندی انكار اوله- بیلیرمی بونك انکاری خالق مطلق طانیماق اوله حفته کیسه اشتباه ایتامی زیر کتاب مقد- سده بیان اولدی وجه اوزره جناب حق عادل مطلق در و مخلوقاتك عدالتله یشامسی ارادات لایتغیرنددر الله عندنده ملیت دیانت تفریقی اولدیغندن سماوی بدرینك اولاداری مساوات صفتی انحق حائر درلر جناب حق محبت عنوانیله معروف اولوب حضرت عسی افتدمن «بر ریکزی سویکز» و «جمله کز برادر سکز» بیور من و بناء علیه اخوت عموم نوع بشرك اك رنجی وظیفه نظیفه سیدر الله انسانی حر یار- انمش معافیله حریت فی آدمك حق طبعی سیدر حقایق مجبوتیه واقف اولدندن صکره مغایر حرکتمزك آجی آجی ثمره لری کوزدیکمز حالده شکایته حقمز وارمیدر ؟

قانون اساسی حقیقت اوزرینه تأسیس اولمش ایسه ده چی قائده احکام قانونیه موجبجه حرکت لازم «سوز ایله پلاو بشمیدی» کی قلم ایله دخی بشمز فعل لازم عمل لازم طوغریلقله حرکت ایتك لازم .

بو بیده حل اولنه حق اك مهم نقطه بنجه شو سؤال در مسئولیت کیمك ؟ بعضیلرک افکار بنجه مسئولیت یالکز قانون اساسینك اجرا سیله مكلف

بر کرده کندی حالمز باقم ، حکومتین ملت اراننده اتحاد و اتفاق حاصل اید. چک
برده بالعکس نفاق صاحبه حق صورتده سوء تدبیرلر کوره رک متأثر اولماق قابل دیر . حکومتک
حقیقی بر حکومت مشروطه اولسقی و انجق حاکمیت ملیه اساسنه استناد ایتسقی بتون موجودیتقرله
ارزو ایدلم و بو املک تمامی خصوصنه هیمز چالیشلم ، فقط بتون ترقیات و تکمالات ملینیدی ده
یالکیز بوندن بکله میلم .

آی بیلهلم که بر پرده امراض مستولیه فصل انسانلری و مملکتی تخریب ایدرسه بر طاقم
امراض اجتماعیه وار درکه بوده بر مملکت بادی خرابیسی اولور . مثلاً مالایانک تحت تأثرنده قالان
قرق الی کویک از زمان اینجنده بر معموره دن ، بر خرابیه چورلمش . نفوس طاعلمش فنا
بولمش ، یاخود سعی و عمله غیر مقدر زبون و مروض بر حاله فانلش ارلینقی نادر کورلمش
احوالدن دکدر . . . «مابعدی وار»

عاشق زینل

عملی اوللم

«سایه شاهانده آمایش بر کل در» یارد فیلری
وق بتون الکا قان آعلامقده هیچ بر عثمانلینک
خواب و راحت بولمامقده و خربسته تقرب
ایدن مقدس وطنمیزی اول جاتوری استبداد
نجه سندن قورنارمغه چالشان بیکارجه کنج
ترکلر و ارمیلر صورت وحشیانده تلف اولمقده
ایدیلر . .

ماضی بی او بوتلم پک اعلا شمدی مشرور
طیتده یاشیوروز مساوات واردر حریت واردر
عدالت واردر اخوت واردر دیوروز کهوره
دهکی شیرخوار چو جقدن بر قدیمی مزارده
بولشان اختیاولره وارنجه جمله من بو کلمه لری
از بر ابتدک باغردیغمز «شاسونلر» ایله فسمز
کسلدی آقشیله اللرمز بورولدی لکن نه کیم
موجنجه حرکت ایتیوروز بو کلماتک مغالری
آکلامامشز دیمکدر . . .

«سوز ایله بلا و بشمز» عوامه معلوم بر
حقیقت ایکن بر بو نمره سوز و بالعکس بعضاً
دخی موجب مضرت اولان طریقندن حرکت
ایلمکده بز اعلان مشروطیتدن شمدی به دکن
شو اوج درت سنه لر ظرفنده کوناکون کتب و
رسائلک نشریله جریده ستونلرنده انواع شعر
و نبدلر ایله مراسمه اجتماعلرده مقرناس محللر
ده بلایع نطقلر ایله بیان ایدیلاان حسیات
وطنپوزوریک بیکده بریسی فعلاً اجرا ایدلش
کوستلش اولسه ایدی مملکتتمز بو کون باشقه
بر حاله مسعودی بر حاله بولنه بیله چکمه قنا
عت حاصل ایتمک و شو مغایر احوالک دوامی
ایسه مشاهده ایدوبده درون دلدن بز آه چکما
مک حزن و کدرله متأثر اولماق طوفانی
الده دکدر .

خاقان مخلوع دور سلطنتده غزتلر هر کون

امانت‌خانه

طشره منادیسی

نومرو ۹

کانون اول ۳۰ سنه ۳۲۷

برنجی سنه

امراض اجتماعیه

حالمزه باقملم : دوت سنه در جابالاوب طورییورز . حکومته نفوذ ویره جکر ، انتظام ویره جکر ، داخلی و خارجی ایشلریمزی یولنه قویاجقز ، دیه اوغراشیورز . بر اراق طاتلی طاتلی خولیالره دالاق ، صانکه بر قاج آی ایچنده بزده اوروپاک اک متمدن اقوامک صرهنه کجه جکر ، اک قوی حکومتلر اعدادینه داخل اوله جقز ، خیالاتی بودرجه نوسیع ایتمیلرده ینه بر چوق امیدلر بسله دیلر . ژاپونلری مثال اوله رق آلدیلر ، ژاپونلر اونوز سنه ایچنده اقصادی شرفده ، منتهای عمر ایدیه ، مرکز مدینه دن خیلی اوزاقده بودرجه موفقیاته مظهر اولدیلری حالده دنیانک اک مهم موقعی اشغال ایدن اوروپا ایله آسیایه واسطه اتصال اولان عثمانیلرک بش اون سنه ده فوق العاده ترقیات و تکملاته موفق اوله جقلمیسه عادتاً قناعت کتیر دیلر . فقط اعتراف ایدلم بو امیدلر قناعتلر کیتدکجه زوالبیرر اولمه باشلادی . بونلرک یرینه یأسلر ، اندیشهلر قائم اولدی هیمز بکله مکه باشلادی . کوزیمزی حکومته دیکدک ، حکومت مشروطه نیک تأسس ایدرک کسب قوت و انتظام ایتمیسه بکله دک ، اک اول امیدلریمزک حکومتده تظاهر ایتمیسه ایستیوردق ، نه کوردک ؟ رجال حکومتک بر چوق خطالری

بونلری کوردکجه شدتلی تنقیداته باشلادی ، بو تنقیداته صلاح حاله یاردم ایتمیور وایدیه میور بلکه حکومتک نفوذینی قیریوردی . چونکه حکومتی تشکیل ایدن ذوات ملتک هیئت عمومیه سنه استناد ایتش و بو هیئت ایچنده عامه نیک حسیات و تمایلاته ، احوال اجتماعیه سنه احتیاجاتنه واقف اوله رق یتشمش طاقدن دکلدی . . . زمان اران اداره ده . اداره حکومت و اداره ملت ایچون یک چوق قصورلر کورمیوردک بوکا مقابل یایه ییلدیکمز ، دوشونه ییلدیکمز نه ایدی ؟ بونلرک قصور- سزلری بواق

سیغورطه جی
سیمون فارقیان
آماسیه

آلیانسه عمر سیغورطه سی لانتاشه حریق
سیغورطه قومپانیه لرینک اجیتی در.
مناسب شرائطله هر نوع سیغه، طمه 'بشاری
یاپار. آرزو ایدنلر بر دفعه تجربه ایتسونلر

چیشیان ارتین آغا دکانک اتصلنده باتمانی
۵۰ (الی) یاره یه معدن کوری صاتیور
هر کس فرصتدن استفاده ایتسون.

ՍՏԱՅՈՒԱԾ ԳԻՐԲ

ԹԻՒԱՊՏԱՑ ՍԵՅԵԱԹԸ ՎԷ ՍՕՍԻԱԼԻՍՏ-
ԼԻՅԵՆ ՄՈՒՀԱՍԵՆԱԹԸ.— Հեղինակու-
թիւն Հրանս Սեվսան (Հիւրրի): (Սօսի-
լիսթիֆ նե' սիր, նեյի մենն եսեր):
Հայաստան քրեքեն լեզուով, յանձնառա-
րելի գործ մը: Էջ 94 գին 4 դր: Դիմել
նեղիմանին՝ Ստեփանուրու:

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԹԱՊԻՊԵԱՆ
Ս.ՄԱՍԻԱ

Ոսկի գործուն եւ սրիճ նպես սեղի-
թոյս արհեստական ասամներ շինելու
Անեքիպեան մեքոսը սորվիլ ուզող
բոլոր ասամնաբոյժներու կը յայ-
տարտէ թէ ինք պատշաճ է այդ
մեքոսը սորվեցնել: Ապաստան
պայմաններով:

ՍՏԱՅՈՒԱԾ ԹԵՐԹԵՐ

Երկիր.— Ս. Գ.	Հնչակեան կիսաաւաքաքերք Կ.	Պոլիս փոս. արկղ. Թ.	127 Գ.	20 դր:
Կայծ.— « «	Հ. Ո.	Միւրքեան ամաքերք	« « « «	12 «
Կոնակ խմբ. Հ.	Արամեանց շաքաքերք	« « « «	« «	20 «
Հայկերկի.—	Կիսամետայ քերք	Մարգուան խմբ. Գ.	Օզանեան	15 «
Նոր Այգ.—	ամաքերք	Մարգուան խմբ., Բրոն, Մանիսանեան		20 «
Բողլոզ.—	ամաքերք	« «	Մամիլանեան վարժապետեան	8 «